ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո հոգևոր մշակույթի այլ բնագավառների հետ մեկտեղ սկիզբ է առնում նաև փիլիսոփայության և փիլիսոփայության պատմության պրոբլեմների գիտական ուսումնասիրությունն ու մշակումը: Սակայն սկզբնական շրջանում դա իրականացվում էր առանձին մասնագետների անձնական նախաձեռնության և էնտուզիազմի հիման վրա՝ իբրև պատասխան այն պահանջի, որ ներկայացնում էին գիտությանը նոր ժամանակը և նոր հասարակությունը:

Փիլիսոփայության հարցերի սիստեմատիկ ուսումնասիրությունը մեզանում սկըսվեց 1943 թ., երբ Հայրենական մեծ պատերազմի ահեղ շրջանում ՀՍՍՀ նորաստեղծ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի կազմում ստեղծվեց փիլիսոփայության սեկտոր: Սեկտորը, որի առաջին վարիչն էր Հ. Գ. Ասլանյանը, ձեռնամուխ եղավ մարքս-լենինյան փիլիսոփայության, ինչպես նաև փիլիսոփայության պատմության հարցերի ուսումնասիրությանը: Ճիշտ է, այն ժամանակ սեկտորն ընդամենն ուներ երեք աշխատակից, բայց սեկտորի ստեղծումը հուսալի նախադրյալներ ստեղծեց գիտական լայն ուսումնասիրություններ ծավալելու համար: Եվ իրոք՝ հետզհետե, սեկտորի աճի և ընդլայնմանը համապատասխան, խորանում ու ծավալվում էր փիլիսոփայության հարցերի ուսումնասիրությունը:

1947 թ. փիլիսոփայության սեկտորը կազմակերպչորեն անջատվեց պատմության ինստիտուտից և դարձավ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ինքնուրույն գիտահետազոտական հիմնարկներից մեկը:

Այդ շրջանում սեկտորի աշխատակիցները շարունակում էին ակտիվորեն հետազոտել դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի ակտուալ պրոբլեմները, հայ փիլիսոփայական մտքի պատմությունը, էսթետիկայի և հայ էսթետիկական մտքի պատմության հարցերը: Սեկտորի հետազոտական պլաններում զգալի տեղ էր հատկացված նաև բուրժուական գաղափարախոսության քննադատությանը:

1959 թ. սեկտորի կազմում ստեղծվեց իրավունքի, իսկ 1962 թ. էսթետիկայի խումբ: ԳԱ նախագահությունը 1964 թ. հաստատեց փիլիսոփայության և իրավունքի սեկտորի կառուցվածքը, որն ընդգրկում էր դիալեկտիկական մատերիալիզմի և բնագիտության փիլիսոփայական հարցերի, պատմական մատերիալիզմի և գիտական կոմունիզմի, փիլիսոփայության պատմության, էսթետիկայի, իրավունքի խմբերը: Մի քանի տարի հետո՝ 1968 թ. հիմնադրվում է նաև կոնկրետ սոցիալական հետազոտությունների լաբորատորիան:

Այսպիսով, 1968 թ. վերջերին բավականաչափ ընդլայնված սեկտորը հրամայաբար պահանջում էր լուրջ կազմակերպչական վերափոխումներ, քանի որ նրա գործունեության բովանդակությունը փաստորեն դուրս էր եկել սահմանված հին շրջանակներից: Շուտով՝ 1969 թ. հուլիսից, վերադաս մարմինների որոշմամբ, փիլիսոփայության և իրավունքի սեկտորի հիման վրա ստեղծվեց ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայու-

թյան և իրավունքի ինստիտուտը, որի դիրեկտոր նշանակվեց Ս. Ս. Թովմասյանը: Հաստատվեց ինստիտուտի հետևյալ կառուցվածքը.

դիալեկտիկական մատերիալիզմի և բնագիտության փիլիսոփայական պրոբլեմների բաժին,

պատմական մատերիալիզմի և գիտական կոմունիզմի բաժին,

փիլիսոփայության պատմության բաժին,

էսթետիկայի բաժին,

կոնկրետ սոցիոլոգիական ուսումնասիրությունների բաժին,

պետության և իրավունքի բաժին:

Նախատեսվել է հետագայում ստեղծել նաև հոգեբանության բաժին:

Իր գոյության 25 տարիների ընթացքում փիլիսոփայության սեկտորը ծավալել է գիտական բեղմնավոր գործունեություն, շատ դեպքերում հասնելով գիտական լուրջ արդյունքների՝ փիլիսոփայական գիտությունների տարբեր բնագավառներում: Բավական է նշել, որ առ այսօր հրատարակվել է 65 անուն գիրք՝ նվիրված մարքս-լենինյան փիլիսոփայության տարբեր հարցերին, ինչպես նաև հայ փիլիսոփայության պատմությանը: Սեկտորը եղավ այն հիմնական օջախը, որտեղ սկիզբ դրվեց հայ փիլիսոփայական, իսկ հետագայում նաև էսթետիկական մտքի պատմության սիստեմատիկ ուսումնասիրությանը:

Անցած տարիներին հրատարակված մենագրություններից հիշատակենք մի քանիսը: Դիալեկտիկական մատերիալիզմի և գիտության տրամաբանության ու մեթոդոլոգիայի գծով՝ Գ. Ա. Գևորգյանի «Իմացության մեջ աբստրակցիայի դերի մասին», «Հավանական և հավաստի գիտելիք», Լ. Հ. Աբրահամյանի «Ազդանշանը և պայմանական ռեֆլեքսը», «Նշանների տեսության իմացաբանական պրոբլեմները», Ս. Հ. Ավետիսյանի «Տարածության և ժամանակի պրոբլեմը հարաբերականության տեսության լույսի տակ», «Մաթեմատիկան և ռեալությունը», կոլեկտիվ աշխատություն «Գիտական իմացության տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցերը» և այլն:

Պատմական մատերիալիզմի և հասարակագիտության մեթոդոլոգիական պրոբլեմների գծով՝ Մ. Ս. Դանիելյանի «Մարքս-լենինյան էթիկայի մի քանի հարցեր», Ա. Մ. Թելունցի «Գիտության զարգացման պայմաններն ու առանձնահատկությունները սոցիալիստական հասարակարգում», Ա. Մ. Ոսկանյանի «Աշխարհագրական միջավայրի դերի մասին հասարակության զարգացման մեջ», Մ. Հ. Անտոնյանի «Օբյեկտիվ պայմանների և սուբյեկտիվ գործոնի հարաբերակցությունը սոցիալիզմի պայմաններում», Ս. Ս. Թովմասյանի «Աշխատանքը և տեխնիկան», Էդ. Ս. Մարգարյանի «Կուլտուրայի տեսության ակնարկներ» և այլն:

Էսթետիկայի գծով՝ Ս. Ս. Թովմասյանի «Արվեստի ստեղծագործությունների գնահատման օբյեկտիվ չափանիշների հարցի շուրջը», Ժ. Ս. Ստեփանյանի «Միքայել Նալբանդյանի էսթետիկան», Յա. Ի. Խաչիկյանի «Արվեստի ճանաչողական նշանակության մասին», «Աբստրակցիոնիզմը և գեղարվեստական ճանաչողությունը» և այլն:

Բուրժուական փիլիսոփայության քննադատության գծով՝ Գ. Ա. Բրուտյանի «Ընդհանուր սեմանտիկայի իմացության տեսությունը», Էդ. Ս. Մարգարյանի «Լոկալ քաղաքակրթությունների կոնցեպցիայի մասին», Ա. Մ. Եկմալյանի «Ագնոստիցիզմը և գիտության ու կրոնի հաշտեցումը բուրժուական գաղափարախոսության մեջ», Հ. Գ. Ասլանյանի «Պրոգրեսի գաղափարը և պատմության բուրժուական փիլիսոփայությունը» և այլն:

Փիլիսոփայության պատմության գծով՝ Վ. Կ. Զալոյանի «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը», «Հայ փիլիսոփայության պատմությունը», «Հայկական ռենեսանսը», Խ. Ն. Մոմջյանի «Լաֆարգը և մարքսիստական տեսության մի քանի հարցեր», «Հելվեցիուսի փիլիսոփայությունը», Գ. Հ.

Գրիգորյանի «Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից (18-րդ դարի երկրորդ կեսը)», «Վահրամ Ռաբունու փիլիսոփայությունը», Ս. Ս. Արևշատյանի «Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները», Ա. Մ. Թևոսյանի «Ա. Գարագաշյանի փիլիսոփայական ու տրամաբանական հայացքները», Թ. Ս. Իսայանի «Գերցենի աթեիզմը» և այլն:

Գիտական հրատարակությամբ (քննական բնագրեր և որոշ դեպքերում զուգահեռ ռուսերեն թարգմանություններ) լույս են ընծայվել անցյալի հայ ականավոր մտածողներ՝ Դավիթ Անհաղթի, Հովհան Որոտնեցու, Եզնիկ Կողբացու և Գալուստ Կոստանդյանի երկերը:

Լույս են տեսել նաև Ա. Զ. Բեգյանի «Հայկական սովետական սուվերեն պետության կազմավորումը և ամրապնդումը» մենագրությունը և այլ գործեր նվիրված Հայկական սովետական պետության և իրավագիտության պատմության առանձին հարցերի:

Հիշատակված գրքերի մի մասի հիման վրա գրվել ու պաշտպանվել են թեկնածուական ու դոկտորական դիսերտացիաներ: Հրատարակությունների զգալի մասը բարձր գնահատականի արժանացավ հանրապետական ու միութենական գիտական մամուլում և հաստատուն կերպով մտավ գիտական շրջանառության մեջ:

Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի աշխատակիցները ակտիվորեն մասնակցել են համամիութենական այնպիսի հրատարակությունների, ինչպիսիք են համաշխարհային փիլիսոփայության պատմության, ՍՍՀՄ ժողովուրդների փիլիսոփայության պատմության, էսթետիկայի պատմության և այլ բազմահատորյակների, սովետական մեծ, փոքր և փիլիսոփայական հանրագիտարանների, ինչպես նաև այլ բնույթի գիտական հրատարակությունների աշխատանքներին: Ինստիտուտի գործերի մի մասը հրատարակվել է Մոսկվայում, թարգմանվել արտասահմանյան երկրներում: Նրա աշխատակիցներից շատերը մասնակցել են միջազգային տարբեր կոնգրեսների աշխատանքներին՝ հանդես գալով գիտական զեկուցումներով:

Իր գոյության տարիների ընթացքում սեկտորը (հետագայում ինստիտուտը) աճեցրել է 25 գիտության թեկնածու և 10 դոկտոր: Ինստիտուտի սաներից շատերին կարելի է հիմա հանդիպել Երևանի, Մոսկվայի և Միության այլ քաղաքների բուհերում և գիտա-հետազոտական հիմնարկություններում:

Ինստիտուտում այժմ աշխատում են 40-ից ավելի գիտաշխատողներ: Նրանց թվում ինստիտուտի ավագագույն գիտաշխատող, Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Վ. Կ. Զալոյանը, գիտության 6 դոկտորներ և 17 թեկնածուներ: Ինստիտուտն այժմ ունի 14 ասպիրանտներ՝ փիլիսոփայության և իրավունքի տարբեր մասնագիտությունների գծով:

Ինստիտուտի հիմնադրման կապակցությամբ լրջորեն վերանայվել ու ճշտվել են գիտահետազոտական աշխատանքների ուղղությունները, պրոֆիլը՝ նպատակ ունենալով մի կողմից առավելագույն չափով վերացնել բազմաթեմայնությունը, մյուս կողմից՝ ընտրել այնպիսի պրոբլեմներ, որոնք, լինելով կարևոր, չեն կրկնի Սովետական Միության մյուս փիլիսոփայական հիմնարկություններում կատարվող աշխատանքները և կնպաստեն մեր ինստիտուտին իր պրոբլեմատիկայով ուրույն տեղ գրավելու Միության մեջ:

Ինստիտուտի գիտական գործունեության հիմնական ուղղություններն են.

ժամանակակից գիտության զարգացման փիլիսոփայական, մեթոդոլոգիական, սոցիոլոգիական և իրավական հարցերի կոմպլեքսային հետազոտություն,

գիտական իմացության տրամաբանական վերլուծության փիլիսոփայական պրոբլեմների ուսումնասիրություն,

ժամանակակից բնագիտության փիլիսոփայական հարցերի ուսումնասիրում,

հայ փիլիսոփայական և էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրում, հայ հին մտածողների երկերի գիտական հրատարակում,

պետության և իրավունքի տեսության ու պատմության հարցերի ուսումնասիրում, ՀՍՍՀ օրենսդրության կատարելագործում:

Այս հաստատված հիմնական ուղղությունները, մի կողմից, ընդգրկում են այնպիսի հարցեր, որոնք վերջին տարիների ընթացքում արդեն մշակվում էին սեկտորում: Մյուս կողմից, նրանք պարունակում են նախկին պրոբլեմների նոր ասպեկտներ և երբեմն էլ բոլորովին նոր հարցեր: Իհարկե, այս բոլորը իրականացնելու ընթացքում կարիք եղավ հրաժարվել անցյալում մշակվող որոշ հարցերից և պրոբլեմներից:

Այսպիսով, ինստիտուտի աշխատակիցների ջանքերը կենտրոնացվել են մի քանի լայն պրոբլեմների շուրջը, որոնց լուծումը կարող է իրականացվել միայն համատեղ կոլեկտիվ աշխատանքի հիման վրա: Նման վերակառուցումը, անշուշտ, նպաստում է հետազոտությունների ավելի նպատակասլաց կազմակերպմանը:

Ինստիտուտի ստեղծումը լուրջ խնդիրներ է դնում մեր առջև: Հատկապես կարևոր է ամբողջ ուժերը գործադրել գիտական հետազոտությունների որակի առավելագույն բարձր մակարդակն ապահովելու համար: Ծրագրվում է նախապատրաստել և անցկացնել տարբեր բնույթի սիմպոզիումներ և կոնֆերանսներ՝ նվիրված փիլիսոփայության ու փիլիսոփայության պատմության տարբեր հարցերին, ինչպես նաև՝ բազմազան սերտ գիտական կապեր հաստատել Հայաստանի, Սովետական Միության, ինչպես նաև սոցիալիստական երկրների փիլիսոփաների հետ: Այդ ուղղությամբ արդեն արվել են առաջին քայլերը:

Այժմ ինստիտուտի ամբողջ կոլեկտիվը մեծ ոգևորությամբ աշխատում է իրագործել իր առջև դրված խնդիրները:

ՅԱ. Ի. ԽԱՉԻԿՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր